Հարցաշար
Առարկայական օլիմպիադայի «Հայոց Եկեղեցու պատմություն» առարկայի մարզային փուլ
10-րդ դասարան (120 րոպե)

№ 1-8

Ընտրովի պատասխանով առաջադրանքներ

1. Եկեղեցում օրվա տարբեր ժամերին կատարվող ամենօրյա աղոթքի արարողությունը կոչվում է՝ *(0.5 միավոր)*
   1) պատարագ
   2) ժամերգություն
   3) անդաստան
   4) հաղորդություն

2. Մկրտության ավազանի մոտ քահանան երեք անգամ հարցնում է կնքահորը, թե երեխան ի՞նչ է ցանկանում: Կնքահայրը պատասխանում է՝ *(0,5 միավոր)*
   1) հավատք, հույս, սեր և օրհնություն
   2) հավատք, հույս, սեր և մկրտություն
   3) հավատք, հույս, սեր և խոնարհություն
   4) հավատք, հույս, սեր և իմաստություն

3. Արիստակես Ա Պարթևը գահակալել է՝ *(0,5 միավոր)*
   1) 325–333 թթ.
   2) 333-341 թթ.
   3) 341-347 թթ
   4) 347-353 թթ.

4. Ղարաբաղի մետրոպոլիտությունը ստեղծվել է՝ *(0,5 միավոր)*
   1) 1805 թ.
   2) 1813 թ.
   3) 1815 թ.
   4) 1828 թ.

5. Հայոց ո՞ր կաթողիկոսն է լիազորել Պողոս Նուբար փաշային մեծ տերություններին ներկայացնելու Արևմտյան Հայաստանում բարենորոգումների հարցը՝
   1) Մկրտիչ Ա Խրիմյանը *(0,5 միավոր)*
   2) Մատթեոս Բ Իզմիրլյանը
   3) Գևորգ Ե Սուրենյանցը
   4) Խորեն Ա Մուրադբեկյանը

6. 1932 թ. Ամենայն Հայոց կաթողիկոս ընտրվեց՝
   1) Գևորգ արքեպիսկոպոս Չորեքչյանը *(0,5 միավոր)*
   2) Խորեն արքեպիսկոպոս Մուրադբեկյանը
   3) Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյանը
   4) Գևորգ արքեպիսկոպոս Սուրենյանցը

7. Հայոց ո՞ր կաթողիկոսի տապանաքարին են գրված «Պաշտպան հայրենեաց» բառերը:
   1) Սիմեոն Ա Երևանցի *(0,5 միավոր)*
   2) Գևորգ Դ Կոստանդնուպոլսեցի
   3) Ներսես Ե Աշտարակեցի
   4) Մկրտիչ Ա Խրիմյան

8. Ե՞րբ է Գարեգին եպիսկոպոս Սարգսյանը ընտրվել Ամենայն Հայոց կաթողիկոս:
   1) 1992 թ. *(0,5 միավոր)*
   2) 1994 թ.
   3) 1995 թ.
   4) 1999 թ.

№ 9-12
Կառուցված պատասխանով առաջադրանքներ

9. Ըստ Ծննդոց գրքի՝ Հայկական լեռնաշխարհից են սկիզբ առել աստվածաշնչյան չորս գետերը՝ Եփրատը, Տիգրիսը, Գեհոնը և _____ :
(1 միավոր)

10. Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքությունը հիմնադրվել է _____ թ.:
(1 միավոր)

11. Հայոց եկեղեցու տարածքային-վարչական միավորը կոչվում է _____:
(1 միավոր)

12. Վազգեն Ա կաթողիկոսին ժողովուրդը մեծարել է _____ պատվանունով: *(1 միավոր)*

№ 13-14

Համապատասխանեցում պահանջող առաջադրանքներ՝ յուրաքանչյուրը 4 փաստից

13. Կատարել համապատասխանեցում: *(1 միավոր)*

1) Միհր
2) Վահագն
3) Տիր
4) Աստղիկ

ա) Ռազմի աստվածուհի
բ) Դպրության, իմաստության և գուշակության
գ) Ամպրոպի և կայծակի աստված
դ) Երկնային լույսի և արևի աստված
ե) Գեղեցկության և սիրո աստվածուհի

1	
2	
3	
4	

14. Հայոց կաթողիկոսների գահակալման տարեթվերը համապատասխանեցնել նրանց անուններին. *(1 միավոր)*

1) Մատթեոս Ա Կոստանդնուպոլսեցի
2) Մկրտիչ Ա Խրիմյան
3) Հովաննես Ը Կարբեցի
4) Գևորգ Դ Կոստանդնուպոլսեցի

ա) 1866-1882 թթ.
բ) 1831–1842 թթ.
գ) 1843–1857 թթ.
դ) 1892-1907 թթ.
ե) 1858–1865 թթ.

1	
2	
3	
4	

№ 15-17

Աշխատանք սկզբնաղբյուրով

15. «Հանրային միասնության հասնելու համար պետք է դաստիարակել առաքինի քաղաքացիներ»:

Հին աշխարհի ո՞ր ականավոր մտածողն է բերված խոսքերի հեղինակը: (*1 միավոր)*

_____

16. «Երանի հեզերին, որովհետև նրանք երկիրը պիտի ժառանգեն:
Երանի նրանց, որ քաղցն ու ծարավն ունեն արդարության, որովհետև նրանք պիտի հագենան…»:

Ավետարանի ո՞ր հատվածից են մեջբերված խոսքերը: *(1 միավոր)*

_____

17. ***«Սերն ու երկյուղը քեզ բնավորություն դարձրու, որ խաբեությամբ չտանջվես»:***

Ո՞վ է բերված խոսքերի հեղինակը: *(1 միավոր)*

№ 18-19

Տերմինների, հասկացությունների, պատճառահետևանքային կապերի, փաստերի իմացություն և խմբավորում պահանջող առաջադրանքներ՝ 2 ճիշտ պատասխանով

18. Ստորև թվարկված վանքերից ո՞ր երկուսն են գտնվել Շիրակում:

1) Նարեկավանք *(1 x 2 = 2 միավոր)*
2) Հոռոմոս
3) Նորավանք
4) Դպրեվանք
5) Հաղպատ
6) Կեչառիս
7) Սանահին

19. Բերված փաստարկներից ո՞ր երկուսն են ճիշտ. *(1 X 2 = 2 միավոր)*

1) Վան քաղաքի միջնաբերդում գտնվող Միհրի դուռ կոչվող ժայռի վրա Սարդուրի արքան փորագրել տվեց իր տերության բոլոր աստվածների անունները:
2) Ըստ զրադաշտական կրոնի՝ չար ուժերի ստեղծողն ու հովանավորը Ահուրամազդան էր:
3) Նորակառույց կամ վերանորոգված եկեղեցու օծման հանդիսավոր արարողությունն անվանում են նավակատիք:
4) Համընդհանուր գաղափարներով տարվածությունը, ինչը հանգեցնում է անտարբերության սեփական երկրի շահերի նկատմամբ, անվանում են համաքաղաքացիություն:
5) Կոստանդնուպոլսում գումարված երկրորդ տիեզերական ժողովը Սուրբ Երրորդության համար սահմանեց «Մի աստվածություն, երեք անձինք» բանաձևը:
6) Մուհամմադի մահվանից հետո նրա հետևորդները մարգարեի քարոզները հավաքեցին մի ժողովածուի մեջ, որը հետագայում կոչվեց «Թալմուդ»:

№ 20

Շարադրանք

(2 միավոր)

Նկարագրել հպարտությունն իբրև մոլություն: